

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Լևոն Շախպարյան

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Հայ ժողովրդի պատմաքաղաքական ճակատագրի հետևանքով մարդու իրավունքները նրա համար պետական-իրավական իրական հիամնահարց դարձան միայն 20-րդ դարի սկզբին՝ Առաջին Հանրապետության հռչակմամբ: Որպես կանոն, նորահռչակ պետություններում հայտարարվում են պետաիրավական համակարգի ծրագիր համարվող հռչակագրեր, մանիֆեստներ և այլն, որոնց մեխը մարդու և քաղաքացու իրավունքներն են: Սակայն Առաջին Հանրապետության պետականակերտությունը չսկզբնավորվեց նման ակտով: Պատճառը Հայաստանում ստեղծված բավականին բարդ և խճճված իրադրությունն էր, արտաքին քաղաքական կարգավիճակի անորոշությունը¹, սահմանային և տարածքային վեճերը: Այս գործոնների ազդեցությամբ քաղաքական մեծամասնությունը հետաձգեց մարդու իրավունքների նկատմամբ հայեցակարգային իրավական դիրքորոշման դրսևորումը:

Յ. Քաջազունունու կառավարությունը 1918 թ. օգոստոսի 3-ին խորհրդարանին ներկայացրեց կառավարության հայտարարագիրը, որը հաստատվեց օգոստոսի 6-ին: Այն կարելի է որակել որպես պետության կառուցակարգի հիմնադրման և «նրա գոյությունն ապահովող ամենամահրաժեշտ գրավականների ծրագիր»²: Իր կառավարության խնդիրը վարչապետը ձևակերպել էր այսպես. «Բացառիկ ծանր պայմանների մեջ է գործի անցել իմ կազմած կառավարությունը... Այս բացառիկ դրությունը նախորոշում է արդեն կառավարության բնույթը: Նա չի կարող ձգտել բազմակողմանի ու լրիվ գործունեության, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակվելու է ամենամահրաժեշտ ու միանգամայն անհետաձգելի խնդիրներով»³: Ըստ այդմ կառավարությունն իր հայտարարագրում նախանշում էր իշխանության խնդիրները տարբեր ոլորտներում⁴: Այնտեղ բացակայում էին սովորական պայմաններում օրինաչափ համարվող ծրագրերը մարդու իրավունքների ոլորտում: Հենց այդ հանգամանքն էլ դարձավ հայտարարագրի խորհրդարանական քննարկումների հիմնական քննադատության թիրախը մյուս կուսակցությունների կողմից: Վարչապետի դիրքորոշումն այդ հարցում միանշանակ էր. «Կառավարությունը իրոք ձգտում է ստեղծել ժողովրդի համար տարրական իրավակարգ, որովհետև նախքան քաղաքացիական ազատություններ ապահովելը պետք է ապահովել կյանքը, նախքան

¹ ՀՀ-ն Փարիզի հաշտության վեհաժողովի կողմից դե ֆակտո ճանաչում ստացավ միայն 1920 թ. հունվարի 19-ին (տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, էջ 379):

² «Հ. Քաջազունունու առաջին կառավարության ղեկավարացիան» (տե՛ս «Ձանգ», թերթ, Եր., 1918, օգոս. 7, թիվ 43 (59):

³ Նույն տեղում:

⁴ Այդ խնդիրների մասին տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 197:

սահմանադիր ժողովի իրավիրելը պետք է ապահովել ազատ խոսքը... Ի՞նչ բժշկություն և ի՞նչ լուսավորություն եք ուզում տալ այն բազմահազար գաղթականությանը, որ սոված, անտուն, սեփական ապականության մեջ թաղված՝ թափառում է այս ու այն կողմ: Կառավարությունը, իհարկե, այդ հարցերի մասին կհոգա, սակայն դա «խոշոր և այժմեական հարց չի համարվում»⁵:

Սակայն մարդու իրավունքներն ունեն իրավական բնույթ, և պետության կառուցման ծրագիրն ամենից առաջ պետք է հայտարարագրեր իր գործունեության իրավական հիմքերը, այսինքն՝ սկսում է ոչնչից ստեղծել այդ հիմքերը, թե՞ ճանաչում է նախորդ շրջանի օրենսդրության իրավահաջորդ գործողությունը: Հայտարարագրում չկար այս հարցի պատասխանը, և միայն խորհրդարանական ելույթի ժամանակ վարչապետը բանավոր հայտարարեց, որ կառավարությունը ղեկավարվելու է նախկին օրենքներով: Միայն 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքով այդ հարցում պարզություն մտցվեց: Նույնիսկ այս օրենքի ընդունումը վերածվեց քաղաքական դիրքորոշումների լուրջ բախման: Ակնհայտ էր, որ պետության, հասարակության կենսագործունեության հիմքն օրենսդրությունն էր, և այն կախարդական փայտիկի մեկ շարժումով ստեղծել հնարավոր չէ: Պետական շինարարության տրամաբանությունը հուշում էր, որ կառավարությունը հենց սկզբից պաշտոնապես պետք է ճանաչեր հին օրենսդրական համակարգի գործողությունը՝ փորձելով աստիճանաբար այն հարմարեցնել հանրապետության պայմաններին: Սակայն դրան դեմ էր խորհրդարանական ընդդիմությունը: Աջ ազատականները պատճառաբանեցին, որ կայսերական օրենսդրությունը ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի ընդունած օրենքներով ձախ բնույթի փոփոխություններ էր կրել «... և ամենից առաջ բանվորական ու հողային օրենսդրության ոլորտում»⁶: Հետաքրքիր է, որ բոլոր սոցիալիստական կուսակցությունները կողմ էին քվեարկել այդ օրենքին, իսկ ԴԺԿ-ն՝ դեմ՝ գտնելով օրենքի ընդունումը սահմանադրական խախտում⁷: Այսպիսով, 1918 թ. դեկ. 6-ի օրենքի ընդունումից հետո օրենսդիրի խնդիրը մարդու իրավունքների ոլորտում դարձավ գործադրված ինստիտուտի կատարելագործումը և հատկապես մարդու իրավունքների ընդհանուր պայմաններին դրական միտվածություն հաղորդելը:

Առաջին հանրապետության հինգ կառավարություններից ծրագրային հայտարարագրեր ունեցել են միայն առաջին (Հ. Քաջազնունու) և երրորդ՝ (Ա. Խատիսյանի, 1919 թ. օգոստոս) կառավարությունները: Ի տարբերություն 1918 թ. օգոստոսյան հռչակագրի՝ Ա. Խատիսյանի կառավարության հռչակագիրն արժարժում էր մարդու իրավունքների հիմնախնդիրը, հատուկ անդրադառնում մի շարք սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքների հիմնահարցերի: Դրանց համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետությունը մարդու իրավունքների ոլորտում զարգացում էր ապրում՝ պետականության հիմնադրումից և տարրական իրավունքների երաշխավարումից մինչև սոցիալ-մշակութային իրավունքների հռչակումը:

Հանրապետության օրենսդիր մարմիններն անդրադարձել են առանձին իրավունքների և ազատությունների իրավակարգավորումներին՝ փոփոխելով կամ լրացնելով դրանց

⁵ Գոհար Մանուկյան, Քաղաքական կուսակցությունները Հայաստանի Հանրապետության խորհրդարանում, «Նորք», հասարակական-քաղաքական, գեղարվեստական հանդես, 1991 թ., մայիս, թիվ 5, էջ 101-102:

⁶ Տե՛ս «Զանգ», թերթ, 1918 թ., դեկտեմբեր, թիվ 81, էջ 2:

⁷ Տե՛ս «Ժողովուրդ», թերթ, 1918 թ., դեկտեմբեր, թիվ 44:

մի մասի նորմատիվ բովանդակությունը: 1920 թ. հուլ. 6-ին ընդունվեց «**Ղպատակության մասին**» օրենքը⁸: Համաձայն այդ օրենքի՝ ՀՀ քաղաքացիներ էին համարվում նաև այն ռուսա-տաճկահպատակները, ովքեր «օրենքի ընդունման պահին բնակվում էին ՀՀ սահմաններում»⁹: ՀՀ տարածքում բնակվող ռուսական և տաճկական հպատակները «Ղպատակության մասին» օրենքը հրապարակվելու պահից երեք ամսվա ընթացքում իրավունք ունեին հրաժարվելու ՀՀ քաղաքացիությունից՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով հաշտարար դատարանին: Ջորակոչի տարիքի հասած հայ տղամարդիկ կարող էին հրաժարվել ՀՀ քաղաքացիությունից միայն զինվորական պարտավորությունը կատարելուց կամ այդ պարտավորության կատարումից ազատվելուց հետո:

Քաղաքացիական ոլորտի օրենսդրորեն ամրագրված իրավունքներից էին անձնական ազատության և անձեռնմխելիության, քաղաքացիական իրավահավասարության¹⁰, բնակարանի անձեռնմխելիության, բնակավայրի ընտրության ազատության և արտասահման մեկնելու հնարավորության, դավանանքի ազատության և հավատի հանդուրժողականության, խոսքի և մամուլի ազատության, կյանքի իրավունքները: Սրանց մեծ մասը գրեթե անփոփոխ գործեցին ՀՀ-ում՝ բացառությամբ անձնական ազատության ու անձեռնմխելիության և կյանքի իրավունքների: Այս իրավունքների կարգավորման պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց հարցում հանրապետության օրենսդրությունը դրսևորել է հետընթաց միտում: Այսպես, օրինակ, ռուսական օրենսդրությամբ (1864 թ. դատական կանոնադրությունների) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը ենթադրում էր, որ ոչ ոք չէր կարող կալանավորվել ու ազատագրվել առանց դատարանի և քննության: Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկ. 6-ի օրենքների ուժով գործող դատական կանոնադրությունները սահմանում էին, որ «ոչ ոք չի կարող պատժվել դատական գերատեսչությանը ենթակա հանցագործության կամ զանցանքի համար այլ կերպ, քան պատշաճ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և դատական կանոնադրություններով սահմանված պատշաճ ընթացակարգով»¹¹: Դա նշանակում էր, որ արդարադատությունը պետք է իրականացվեր միայն օրենքում նշված պատշաճ դատարանների կողմից, որոնք հռչակված էին անկախ, իսկ դատավորներն օժտված էին անփոփոխելիության իրավունքով: Օրենսդիր և գործադիր մարմիններն իրենց «արտակարգ օրենքներով» հիմնադրում էին արտակարգ դատարաններ, որոնցում չէին գործում դատավարական երաշխիքները, իսկ դրանք ղեկավարվում էին կառավարության կողմից՝ ստանալով հրահանգներ դատելու կամ չդատելու, մահապատիժ նշանակելու կամ չնշանակելու հարցերով: Այդ դատարանները նույնիսկ ձևականորեն չէին

⁸ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 145:

⁹ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 129, թ. 29: Պահպանվել է օրենքի ռուսերեն տեքստը: Վերտառության մեջ օգտագործված է «подданство» (հպատակություն) եզրույթը, սակայն բուն տեքստում հանդիպում են նաև «քաղաքացի» և «քաղաքացիություն» հասկացությունները:

¹⁰ Ժամանակավոր կառավարությունը 1917 թ. մարտին հայտարարեց, որ իր պարտքն է պետական կարգերի վերակառուցումը նոր՝ ազատության, օրինականության, իրավահավասարության սկզբունքներով: Հայտարարվեց համաներում քաղաքական և կրոնական գործերով, վերացվեցին դասային, կրոնական, ազգային սահմանափակումները (տե՛ս Стешенко Л. А., Шамба Т. М., История государства и права России: Академический курс. В 2 т., Т. 2, XX в. М., 2003, էջ 693):

¹¹ Устав уголовного судопроизводства. հոդվ. հոդվ. 1, 14, ինչպես նաև Устав гражданского судопроизводства, հոդվ. հոդվ. 1, 2, 3, 415 /В кн.: Российское законодательство X-XX веков. Том 8, Судебная реформа. М., 1991:

մտնում արդարադատության նախարարության համակարգի մեջ, նրանցում չէր գործում դատավորի անկախության երաշխիք հանդիսացող անփոփոխելիության սկզբունքը:

Պարտադիր որոշումների, արտակարգ լիազորություններով օժտված կոմիսարների ինստիտուտների (դասալքության դեմ պայքարի կոմիսարը, Երևան քաղաքի պետի պաշտոնը, «զինահավաքի հատուկ կոմիսարը»), արտակարգ դատարանների ու դատավարության լայնակի կիրառումը ցույց են տալիս, որ զանգվածաբար կիրառվում էր վարչական կալանքը, ինչը վերացնում էր անձի անձեռնմխելիության իրավունքի երաշխիքները:

1917 թ. մարտին Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը վերացրեց **մահապատիժ**¹²: Սակայն հուլիսի 12-ին ընդունեց որոշում «Ռազմաճակատում մահապատիժ մտցնելու և ռազմահեղափոխական դատարանների հիմնադրման մասին»¹³: Այդ որոշմամբ թվարկված զինվորական հանցագործությունների, ինչպես նաև լրտեսության համար որպես պատժի բարձրագույն տեսակ սահմանվում էր զնդակահարությունը, որոնց վերաբերյալ գործերը քննում էին ռազմահեղափոխական դատարանները, որոնց դատավճիռներն անհապաղ մտնում էին ուժի մեջ և անմիջապես կատարվում: Մահապատժի արգելման և զինվորական հանցագործությունների համար սահմանափակ կիրառման ժամանակավոր կառավարության սահմանած կարգը սկզբնական շրջանում գործեց նաև Առաջին Հանրապետությունում: Սակայն 1919 թ. հուլիսի 24-ին ընդունվեց «Օրենք մահվան պատժի մասին»: Դրանով պետական և զինվորական հանցագործությունների բավականին լայն շրջանակի համար սահմանվեց մահապատիժ¹⁴: 1920 թ. մայիսյան ապստամբության առիթով օրենսդիր կառավարությունը մայիսի 8-ին ընդունեց «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին ժամանակավոր օրենքը»¹⁵: Պատժական քաղաքականության նորամուծություններից էր այն, որ քրեաիրավական ուղղակի արարքներ, որոնք 1919 թ. հուլիսի 24-ի օրենքով ունեին այլընտրանքային պատիժներ, ապա այս օրենքով դրանց համար սահմանված էր միայն մահապատիժ: Մահապատժի կիրառման շրջանակների ընդլայնում կատարվեց նաև «Պետական դրամանիշեր կեղծելու դեմ պատիժներ սահմանելու մասին» 1920 թ. օգոստոսի 20-ի օրենքով¹⁶, ինչպես նաև 1920 թ. հոկտեմբերի 2-ի «Պաշտոնեական հանցագործությունների մասին ժամանակավոր օրենքով»¹⁷: Այսպիսով, հանրապետությունում քրեածին գործոցների ծավալումն ու հանցավորության մակարդակի աճը հարկադրեցին օրենսդրական ճանապարհով ներմուծելու մահապատիժ և ընդլայնել դրա կիրառման շրջանակները:

Պավանանքի ազատության և հավատի հանդուրժողականության իրավունքի բովանդակության մեջ փոփոխություններ չեն արվել: Այդ տարիներին հանրապետությունում գործում էին մի քանի մասնավոր հրատարակչություններ և տպարաններ, տպագրվում էին տասնյակից ավելի մեծաքանակ և փոքրաքանակ թերթեր և ամսագրեր ինչպես հանրապետական, այնպես էլ տեղական մակարդակով, օրինակ՝ Կարսի և Ալեքսանդրապոլի: Դրանց հիմնական մասը քաղաքական կուսակցությունների, իսկ մնացածները տարբեր

¹² Տե՛ս Исаев И. А., История государства и права России. М., 2004, էջ 549:

¹³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 705-706:

¹⁴ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 126:

¹⁵ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 126:

¹⁶ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, թ. 114:

¹⁷ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 336:

բնույթի հասարակական միությունների տեղեկատվական-լուսավորչական օրգաններն էին: Մամուլի և հրատարակչության ազատության իրավունքի ազատական կարգավորումը երկար չգործեց: 1920 թ. գարնանից բյուրո կոչված կառավարությունը սահմանեց այս իրավունքի արտակարգ սահմանափակումներ: Հակակառավարական թուղիկների ու գրականության տպագրությունը և տարածումը կանխելու նպատակով 1920 թ. մայիսի 6-ին կառավարությունը կայացրեց որոշում «տպարանների գրավման, անոնց վրա դրվելիք հսկողության և օգտագործման խնդիրների» գործադրումը տալ ներքին գործերի նախարարի հայեցողությանը¹⁸: Խոսքի և մամուլի ազատության իրավունքի դեմ ուղղված հաջորդ արտակարգ միջոցառումը կիրառվեց 1920 թ. սեպ. 17-ին, երբ կառավարությունը ՆԳՆ-ին հանձնարարեց «միջոցներ ձեռք առնել «Նոր խոսք» թերթի մուտքը Հայաստան արգելելու» համար¹⁹:

Քաղաքական իրավունքներից հանրապետությունը ռուսական օրենսդրությունից ներմուծեց միություններ և միավորումներ կազմելու իրավունքը, ժողովներ անցկացնելու իրավունքը, քաղաքացիների պետական ծառայության ընդունվելու իրավունքները: Ժողովների իրավունքն ամրագրված էր կայսերական օրենսդրությամբ²⁰: Առաջին Հանրապետությունում ժողովներ և հասարակական հանրահավաքներ գումարելու իրավունքը գործում էր անխափան: Դրանց անցկացման հայտարարությունները երբեմն տպագրվում էին մամուլում²¹: Առաջին հանրապետությունում գործում էր բավականին ազատական բնույթ ունեցող միավորման իրավունքը, այդ թվում՝ քաղաքական կազմակերպություններ և արհմիություններ ստեղծելու, որի շնորհիվ հանրապետության քաղաքական համակարգը բազմակուսակցական էր, ազատորեն գործում էին նաև այլազգիների ազգային խորհուրդները, որոնք մասնակցում էին ընտրական գործընթացներին: Կային նաև արտախորհրդարանական կուսակցություններ, օրինակ՝ Հայ սահմանադիր ռամկավարները, Սոցիալ-դեմոկրատական հնչակյանները, «սպեցիֆիկները» և այլն²²:

Առաջին հանրապետությունում լրիվ նոր իրավական հիմքերով կարգավորվեց **պետական ծառայության անցնելու իրավունքը**²³, **ընտրվելու և ընտրելու իրավունքը**: Հայաստանի խորհուրդը 1919 թ. մարտի 31-ին ընդունել է «Հայաստանի պառլամենտի ընտրությունների օրենքը», որն ամրագրում էր ընտրական իրավունքի ժողովրդավարական սկզբունքներ: Օրենքի 1-ին հոդվածը սահմանում էր, որ «ՀՀ պառլամենտի անդամներին ընտրում է ազգաբնակչությունը, առանց սեռի խտրականության ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, ուղղակի ընտրության և գաղտնի քվեարկության միջոցով, գործադրելով համեմատական ներկայացուցչության սկզբունքը»:

¹⁸ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 80:

¹⁹ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 2, գ. 118, 2-րդ մաս, թ. 207:

²⁰ 1906 թ. մարտին ընդունվել էր հրովարտակ «ժողովների ժամանակավոր կանոնների մասին» (տե՛ս Исаев И. А., նշվ. աշխ., էջ 518-519):

²¹ Տե՛ս օրինակ՝ «Յառաջ», թերթ, 1920 թ., 10 հոկտեմբերի, թիվ 22:

²² Վերջիններս հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում առանձնապես շոշափելի դեր չեն ունեցել (տե՛ս Հակոբյան Ա. Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.): Երևան, 1998, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 16):

²³ Առաջին հանրապետության պետական ծառայության համակարգի հիմնադրման, կանոնակարգման և դրա սոցիալական երաշխիքների ստեղծման մասին տե՛ս Վաղարշյան Ա. Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): ԵՊՀ հրատ., ԵՊՀ, 2012, էջ 122-126:

Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին երկու սեռի այն քաղաքացիները, որոնց 20 տարին լրացել էր: Օրենքում չէր սահմանված որևէ հակաժողովրդավարական բնույթի ընտրական ցենզ: Պասիվ ընտրական իրավունք ունեին այն քաղաքացիները, ովքեր օժտված էին ակտիվ ընտրական իրավունքով: Ակտիվ ընտրական իրավունքից զրկվում էին նաև իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք:

Մասնավոր սեփականության իրավունքը ճանաչվում էր Ռուսական կայսրության 1906 թ. ապրիլի 23-ի հիմնական պետական օրենքներով: Մասնավոր սեփականության իրավունքին զուգընթաց պետությունը ճանաչում է ձեռնարկատիրական գործունեության իրավունքը, որը կարգավորվում էր քաղաքացիական օրենսդրությամբ²⁴: Այդ օրենսդրությունը կառուցված էր ապրանքների և ֆինանսների ազատ շրջանառության սկզբունքի վրա, բայց հնրավոր էր համարում պետական կարգավորումը, որոշ դեպքերում՝ պետական մենաշնորհների ներմուծումը: Սեփականության իրավունքի սահմանափակումը օրենսդիրին պատկանող լիազորություն էր և կարող էր սահմանվել միայն օրենքով: Այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի սահմանափակումները սահմանել է կառավարությունը, դա արվել է օրենքի ուժ ունեցող ակտերով՝ խորհրդարանի տված լիազորությունների հիման վրա:

Ձեռնարկատիրության ազատության և դրա հետ կապված ապրանքների ու մթերքների ազատ շրջանառության իրավունքի սահմանափակումը կատարվում էր հանրապետության բյուջեի պակասորդը լրացնելու կամ բնակչության սպառողական կարիքները բավարարելու համար կենսական նշանակություն ունեցող ապրանքների շրջանառության կարգավորման նպատակով: Այս իրավունքի սահմանափակումը օրենսդիր մարմնին պատկանող լիազորություն էր և կարող էր սահմանվել միայն օրենքով, իսկ սահմանափակումները կամ արգելքները կարող էին վերացվել նաև կառավարության որոշումներով:

Ռուսական կայսրության ամենասրված հիմնախնդիրներից էին **աշխատանքային** հարաբերությունները, գործատուների և աշխատողների բախումները, որոնք 1917 թ. Փետրվարյան հեղափոխության ընթացքում և դրանից հետո էլ ավելի բարդացան: Հայաստանում աշխատանքային ոլորտի հարաբերությունները մույնքան սուր չէին, որքան Ռուսաստանում: Ի վերջո երկրի տնտեսությունն ագրարային էր, բայց հանրապետությանում ջանքեր թափեցին այս ոլորտում իրավակարգավորումներ իրականացնելու համար: Աշխատանքի ոլորտում պետական կառավարման գործառույթներն իրականացնելու համար 1919 թ. ապրիլի 8-ի ընդունվեց օրենք «Խնամատարության միևնույնությունը Խնամատարության և աշխատանքի միևնույնության վերածելու մասին»²⁵: Խնամատարության և աշխատանքի նախարարության աշխատանքի պաշտպանության բաժինը սկսել է գործել 1919 թ. հունիսի 1-ին: Այն առաջին հերթին ձեռնարկել է աշխատանքային օրենսդրությունը հայերեն թարգմանելու և հրապարակելու գործը²⁶: Այնուհետև ամբողջ

²⁴ Տե՛ս Իսաև Ի. Ա., նշվ. աշխ., էջ 520:

²⁵ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919, հոդվ. 105, էջ 58:

²⁶ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 733, թ. 63: Ըստ նախարարության տվյալների՝ մշակվել էին նաև հետևյալ օրինագծերը. «Դժբախտ դեպքերից բանվորների ապահովագրության մասին», «Աշխատանքային պայմանագրերի մասին», «Աշխատանքի պաշտպանության մասին»: Վերջինս կարգավորել էր երեխաների, կանանց և զիջերային աշխատանքը: Արխիվային նյութերում պահպանվել է աշխատավորական դատարանների մասին կանոնադրության նախագիծը, ինչը վկայում է, որ իշխանությունները աշխատանք էին տանում դրանց ստեղծման ուղղությամբ (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 855, թ. 68):

հանրապետության տարածքը բաժանվել է չորս աշխատանքային կոմիսարիատների միջև՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Նախիջևանի: 1919 թ. Երևանում կազմակերպվեց աշխատանքի բորսա, իսկ Թիֆլիսում՝ աշխատողների հավաքագրման միջնորդական բյուրո: 1919 թ. հունիսի 23-ին Երևանում հիմնադրվեց աշխատանքային հաշտարար կամերա²⁷: Հայաստանի պառլամենտի 1920 թ. հունվարի 8-ի օրենքով հիմնադրվեց առանձին՝ աշխատանքի նախարարությունը²⁸, որի կառուցվածքում կար աշխատանքի պաշտպանության կոմիսարիատ՝ կոմիսարի գլխավորությամբ: Նախարարության տեղական մարմիններից էին Ալեքսանդրապոլի (Շիրակի նահանգի) աշխատանքի կոմիսարները: Մնացած քաղաքներում՝ Դիլիջան, Ղարաքիլիսա, Ախտա, գործում էին նախարարության հրահանգիչներ: Աշխատանքային հաշտարար կոլեգիալ կամերա հիմնադրվեց նաև Ալեքսանդրապոլում:

Հանրապետության գոյության առաջին շրջանում հիմնական շեշտը դրված էր պետական շինարարության և կյանքի համար նվազագույն երաշխիքների ստեղծման վրա՝ պայքարելով սովի և համաճարակների դեմ: Այդուհանդերձ, հանրապետության գոյության ընթացքում, սկզբում հատվածաբար, սակայն հետագայում ավելի լայնորեն սկսեցին հոգ տանել **սոցիալական և մշակութային իրավունքների** երաշխավորման մասին: Դա նկատվում է հենց թեկուզ Հ. Քաջազունու և Ա. Խատիսյանի կառավարությունների հայտարարագրերի համեմատությունից: Կարող ենք ասել, որ Առաջին հանրապետությունը ճանաչում էր իր հպատակների և գաղթականների այնպիսի սոցիալ-տնտեսական իրավունքները, ինչպիսիք էին խնամատարությունը (նվազագույն ապահովությունը, որը երեխաների նյութական պահանջումների և իրավունքների երաշխավորումը, աշխատանքի իրավունքը և կրթության իրավունքը): Այս իրավունքների ապահովման համար գործում էին առանձին նախարարություններ, որոնք հանրապետության կայացմանը զուգընթաց ուժեղացնում էին թվարկված իրավունքների երաշխիքները:

Կրթության իրավունքի հիմնահարցը բարձրացվեց դեռևս 1918 թ. ամռան ընթացքում: «Հայաստանի դպրոցները, որ ավերվել կամ փակվել էին թուրքական ներխուժման ընթացքում, պետք է սկսեին նորից գործել: Ե՛վ կառավարությունը, և՛ օրենսդիր մարմնի հանրային կրթության հանձնախումբը ընդունեցին, որ ուսուցման և կառուցողական լայն փոփոխությունները տվյալ ժամանակամիջոցին գործնական չեն: Ավելին, օրենսդիր հանձնախումբն ընդդիմացավ կրթության պետական մենաշնորհին և հանձնարարեց, որ անհատ հովանավորները և քաղաքացիական, էթնիկական ու հասարակական խմբերը խրախուսվեին դպրոցներ պահելու համար: Ի նկատի ունենալով կառավարության ֆինանսական խիստ դժվարին կացությունը դպրոցների մատակարարման սկզբնական պատասխանատվությունը պետք է դրվեր տեղական համայնքների վրա: Ժամանակի ընթացքում հանրային կրթության նախարարությունը համակարգելու էր դպրոցական ցանցը և իրագործելու էր հանրակրթական ծրագրի ստեղծումը»²⁹: Ըստ ծրագրի՝ գործելու էին նաև ծխական դպրոցները, մահմեդական և ռուս բնակիչները ունենալու էին կրթական լիակատար ազատություն: «Այս սկզբունքներով Հայաստանը նախապարաստվեց ուսումնական առաջին օրվան՝ 1918 թ. հոկտեմբերի 1-ին»: Մինչև տարեվերջ ավելի քան

²⁷ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 733, թ. 63:

²⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. պառլամենտի, 1920, 11 հունվարի, Եր., թիվ 2, հոդվ. 11, էջ 9-10:

²⁹ Հովհաննիսյան Ռ. Գ., 2005 թ., էջ 49:

130 դպրոցներ վերսկսեցին ուսուցումը: Իսկ 1919 թ. դրությամբ կային 135 տարրական դպրոցներ՝ 11136 աշակերտներով, և 10 միջնակարգ դպրոցներ՝ 313 աշակերտներով³⁰:

1920 թ. ամռան դրությամբ կար 20 միջնակարգ դպրոց՝ 5063 աշակերտներով, որոնցում կրթությունը լրիվ հայացված էր, իսկ ռուսերենը համարվում էր օտար լեզու: Տարրական դպրոցների քանակը հասել էր 456-ի, որոնցում սովորում էին 40188 աշակերտ³¹: Սակայն դպրոցական տարիքի երեխաների քանակը հասնում էր 150 հազարի³²: Նկատվում է առաջընթացը՝ ապահովել կրթության իրավունքը: Բացվել են նաև արհեստագործական և արվեստի դպրոցներ, ինչպես նաև պետական և ժողովրդական համալսարանները, իսկ 1920 թ. ամռանը՝ բարձրագույն երաժշտական դպրոցը³³:

Սոցիալական ոլորտում կենսական նշանակություն ուներ պետության կողմից **սոցիալական որոշակի ծառայությունների մատուցումը բնակչությանը**: Այս հիմնահարցը Հայաստանում ձեռք էր բերել յուրահատկություններ՝ պայմանավորված գաղթականության հոծ զանգվածների առկայությամբ, պարենավորման խնդիրներով, ինչպես նաև համաճարակների տարածմամբ: Ի սկզբանե հանրապետության իշխանություններն ընդունեցին պետության պարտավորությունը՝ բնակչությանը մատուցել որոշակի սոցիալական ծառայություններ: Այդ պարտավորությունը բնակչության համար ձևակերպված էր որպես խնամատարության իրավունք-հավակնություն³⁴: 1918 թ. հոկ. 11-ի «Գաղթական որբերի խնամատարության և դաստիարակության մասին» օրենքով սահմանվեց, որ Հայաստանի սահմաններում բոլոր գաղթական որբերի խնամատարության ու դաստիարակության գործը պետությունը վերցնում է իր վրա³⁵: Այդ պարտավորության կատարման համար պետք է ստեղծվեր հանրային խնամատարության նախարարություն³⁶: 1918 թ. նոյ. ձևավորված կոալիցիոն կառավարության կառուցվածքում հիմնադրվեց հանրային խնամատարության նախարարությունը, որը 1919 թ. ապրիլի 8-ի օրենքով վերածվեց խնամատարության և աշխատանքի նախարարության³⁷: Բացի դրանից՝ 1919 թ. հուլիսի 5-ի օրենքով խնամատարության և աշխատանքի նախարարությանը միացրեց պարենավորման նախարարությունը³⁸: Աշխատանքի նախարարություն ստեղծելուց հետո այն կոչվեց խնամատարության և վերաշինության³⁹:

Այս նախարարության իրականացրած գործունեությունը հստակ ցույց է տալիս, որ նորաստեղծ հանրապետությունը ճանաչում էր անհատի և բնակչության երեք հիմնարար իրավունքները՝ **առողջության պահպանման և բժշկական օգնություն ստանալու իրա-**

³⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 50:

³¹ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 207, ց. 1, ց. 341, թ. 42-43:

³² Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, ց. 427, 1-ին մաս, թ. 5:

³³ Տե՛ս «Օրենք Երևանում բարձր երաժշտական դպրոց բանալու մասին», 1920 թ., օգոստոսի 9: ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 156, թ. 77:

³⁴ Խնամատարության իրավունք եզրույթը ծագել էր ռուսական «право на призрения» իրավական ձևակերպումից:

³⁵ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918 թ., Երևան, հոդ. 23, էջ 14:

³⁶ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918, Եր., հոդվ. 23, էջ 14:

³⁷ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919, Եր., հոդվ. 105, էջ 58:

³⁸ 1919 թ. դեկտեմբերի 30-ի «Պարենավորման նախարարության վերացման մասին» օրենքով այդ նարմինը վերացվեց, իսկ դրա պարտականությունները մթերքների գնման գործը հանձնվեց ֆինանսների նախարարությանը, բաշխման գործառույթը՝ խնամատարության նախարարությանը:

³⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. պառլամենտի, 1920, 11 հունվարի, Եր., թիվ 2, հոդվ. 12, էջ 10:

վունքը, բնակչության չքավոր խավերին սոցիալական օգնության մատուցումը, որը և չքավոր երեխաներին պետական հիմնարկությունների խնամատարության տակ վերցնելու պետության պարտավորությունը: Վերջինիս հետ կապված՝ առաջանում էր նաև որբանոցներում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրը: Որբանոցների կառավարումը Հայաստանի Հանրապետությունում հանձնված էր խնամատարության նախարարության տնօրինությանը: 1920 թ. մայիսի 16-ին ընդունված օրենքով արդարադատության նախարարությանը կից հիմնվում էր Որբական խորհուրդ, որի խնդիրն էր պահպանել որբերի անձնական և գույքային իրավունքները, պարզել նրանց գույքային վիճակը և վերականգնել խախտված իրավունքները⁴⁰: Նախատեսվում էր Որբական խորհրդի իրավասությունը տարածել նաև Հանրապետության սահմաններից դուրս, ինչպես նաև որբանոցներից դուրս գտնվող հայ որբերի վրա⁴¹:

Այսպիսով, Հանրապետությունը, որդեգրելով մարդու իրավունքների ռուսական օրենսդրությունը, չքավարվեց դրա մեխանիկական կիրառմամբ, այլ զարգացրեց այն՝ ստեղծելով իրավական նոր երաշխիքներ: Այս առումով առաջընթացն ակնհայտ է աշխատանքային իրավունքների, կրթության և սոցիալական ոլորտի մի շարք իրավունքների ապահովման, դրանց պաշտպանության ու երաշխավորման կառուցակարգերի ստեղծման հարցում: Ընդ որում դրանց թափը և մասշտաբայնությունը հիմք են տալիս պնդելու, որ Առաջին հանրապետությունը դրսևորեց ազատական պետությունից սոցիալական պետության վերածվելու միտում:

INSTITUTE OF HUMAN RIGHTS IN THE LEGAL SYSTEM OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Levon Shakhparyan

A postgraduate student of Philosophy, Sociology and Law Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia

The first Republic of **Armenia** didn't satisfy by simple application of the Russian legislation, but improved and adapted it. The progress is evident in the field of ensuring of employment rights and a number of other rights from social and educational sphere and in creating mechanisms for their protection and guarantee.

As a liberal state the Republic showed a tendency of transformation into a social state. By contrast in the field of settlement of some civil rights the regression is observed, a number of their guarantees were eliminated by applying special forms of management, introducing special courts and procedure forms.

⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 31, ք. 16:

⁴¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 104, ք. 18:

ИНСТИТУТ ПРАВ ЧЕЛОВЕКА В ПРАВОВОЙ СИСТЕМЕ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Левон Шахпарян

*Аспирант института философии,
социологии и права НАН РА*

Первая Республика Армения не ограничилась простым применением российского законодательства, а усовершенствовала его. Прогресс очевиден в вопросах трудовых прав, права на образование, обеспечения ряда прав социальной сферы. Республика, будучи либеральной, продемонстрировала намерение стать социальным государством. Несмотря на это в вопросах регулирования некоторых гражданских прав отмечается регресс: были отменены ряд гарантий прав человека с применением чрезвычайных форм правления, судов и форм судопроизводства.

Բանալի բառեր – ռեցեպցիա, քաղաքացիական իրավունքներ, մասնավոր սեփականության իրավունք, դավանանքի ազատություն, մահապատժի արգելք, սահմանադիր ժողով, քաղաքական իրավունքներ, ընտրական իրավունք, կրթության իրավունք, բժշկական օգնություն ստանալու իրավունք, խնամատարության իրավունք, ազատական պետություն, սոցիալական պետություն:

Key words: reception, civil rights, the right to private property, freedom of religion, prohibition of the death penalty, constituent assembly, political rights, voting rights, right to education, right to receive medical care, care right, liberal state, social state.

Ключевые слова: рецепция, гражданские права, право частной собственности, свобода вероисповедания, запрет смертной казни, учредительное собрание, политические права, избирательное право, право на образование, право на получение медицинской помощи, право на признание, либеральное государство, социальное государство.